ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-17-1-15/12 (ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12) ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ ենթակայանների սարքերի (տրանսֆորմատորային ենթակայան) ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 24.02.2017թ. N 18/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 13.03.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ն.Մնոյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Հարությունյանը, Դ.Շատվերյանը, Մ.Սարդարյանը, Ա.Եղիազարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-17-1-15/12 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ն.Մնոյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-17-1-15/12 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Բաշինջաղյան 1փ., շ. 13, բն. 30)
2. «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Վ. Վաղարշյան 22-24)
3. «ԲԻԳ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Կ. Ուլնեցու 3 փակ. 6 շ. 7 բն.)
4. «Այյունեթվորքս» ՍՊԸ (ք. Երևան, Տերյան 19-4)

-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-17-1-15/12 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին (ARMEPS) համակարգի միջոցով հայտ չեն ներկայացրել համակարգում 13.03.2017թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

-«ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի, «ԲԻԳ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտեր:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

-«ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

-«ԲԻԳ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ՝ մասնավորապես Հավելված-3.1-ում նշված է, որ «ԲԻԳ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ն պատշաճ ձևով իրականացրել է 34657165 ՀՀ դրամի էլեկտրամատակարարման շինմոնտաժային աշխատանքներ, սակայն հրավերով նմանատիպ են համարվում էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների մատակարարման գործարքները:

-«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն Հավելված-1-ում նշված է սխալ ծածկագիր և Պատվիրատուի անվանում, իսկ Հավելված-4-ը՝ գնային առաջարկի ձևը չի համապատասխանում ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-17-1-15/12 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված ձևաչափին:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ				Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ			
		«ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	«ՄԱԺԷՎ» ՍՊԸ	«ԲԻԳ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ	«Այյուսեթ վորքս» ՍՊԸ	«ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	«ՄԱԺԷՎ» ՍՊԸ	«ԲԻԳ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ	«Այյուսեթ վորքս» ՍՊԸ
1	Ենթակայանների սարքեր (տրանսֆորմա տորային ենթակայան)	2800000	7000000	2637280 ԵՏՄ	2887500	3360000	8400000	3164736 ԵՏՄ	3465000

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշման 45-րդ կետի՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-17-1-15/12 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «ԲԻԳ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հաջորդ նիստը հրավիրել 2017թ. մարտի 15-ին, ժամը 10:00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ն.Մնոյան

Անդամներ՝ Լ.Հարությունյան

Դ.Շատվերյան

Մ.Սարդարյան

Ա.Եղիազարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան